ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն** - Արամ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը** – Լոռու մարզպետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները** – Չինաստանի ժողովրդական հանրապետություն, Շանսի նահանգի Թայուան քաղաք, 05-08.09.2023թ.

4. **Հրավիրող կողմը** - Չինաստանի Շանսի նահանգի Արտաքին կապերի գրասենյակ

5. **Գործուղման նպատակները** – Թայուանի էներգիայի ցածր ածխածնային զարգացման ֆորումին մասնակցություն

6. **Քննարկված թեմաները** – Լոռու մարզում կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման նպատակով իրականացվող ծրագրերը

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը** – Սեպտեմբերի 5-ին Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը հանդիպել է Շանսի նահանգի կոմունիստական կուսակցության ղեկավար Լան Ֆոանի և Շանսիի նահանգապետի տեղակալ Վու Վեի հետ: Կողմերը նաև նվերներ են փոխանակել: Նահանգապետի տեղակալի հետ քննարկվել են երկու տարածաշրջանների միջև համագործակցության ակտիվացման հետ կապված հարցեր:

Սեպտեմբերի 6-ին մարզպետը ֆորումի շրջանակներում հանդես է եկել ընդարձակ զեկույցով՝ ներկայացնելով Լոռու մարզը, զարգացման հնարավորությունները, էներգետիկ պոտենցյալը և շրջակա միջավայրի վրա էներգակիրների բացասական ազդեցության մեղմացմանն ուղղված քայլերը, ծրագրերը: Ֆորումի ընթացքում ցուցադրվել է նաև Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից պատրաստված՝ մարզի և վերջինիս տնտեսական հնարավորությունների մասին պատմող տեսաֆիլ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը** – բանավոր պայմանավորվածությունների շարքում ընդգրկված են. Վանաձոր քաղաքի և Շանսի նահանգի որևէ քաղաքի հնարավորությունները քույր քաղաքներ լինելու վերաբերյալ, աղբի վերամշակման հնարավոր տարբերակները, Վանաձորի մի շարք գործարանների հնարավոր գործարկումների հավանականության վերանայում

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները** – Քույր քաղաքների հարցը կքննարկեն համապատասխան կառույցները, աղբի վերամշակումը ևս, գործարանների մասով առավել խոր ուսումնասիրություն է անհրաժեշտ, չի բացառվում Շանսի նահանգի պատվիրակության այց Լոռու մարզ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

12.09.2023թ.